Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2022–2023 ուստարի)

9-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)

ա) Հայոց պատմություն (20 միավոր)

1. Ե՞րբ է շահագործման հանձնվել Արփա-Սևան ջրատար թունելը. 0,5 մ.
   ա) 1968 թ. բ) 1979 թ. գ) 1981 թ. դ) 1989 թ.
2. Ո՞վ էր գլխավորում Մեծ Հայքի զորքերը Գավգամելայի ճակատամարտում. 0,5 մ.
   ա) Երվանդ III բ) Երվանդ IV գ) Միթրաուստես դ) Երվանդ II
3. Որտե՞ղ է ծնվել հայ ազատագրական պայքարի մեծ գործիչ, ականավոր հայդուկապետ Աղբյուր Սերոբը. 0,5 մ.
   ա) Մկդենք գյուղում բ) Սոխորդ գյուղում գ) Ահարոնք գյուղում դ) Թեղուտ գյուղում
4. Ո՞վ էր գլխավորում Թիֆլիսի հայության ինքնապաշտպանությունը թուրք-թաթարներից. 0,5 մ.
   ա) Նիկոլ Դուման բ) Փարամազ գ) Վարդան դ) Արմեն Գարո
5. Ո՞ր թվականին է կնքվել Հռանդեայի պայմանագիրը. 0,5 մ.
   ա) 62 թ. բ) 64 թ. գ) 66 թ. դ) 58 թ.
6. Քանի՞ ընտանիք է աքսորվել Խորհրդային Հայաստանից Ալթայի երկրամաս 1949 թ.. 0,5 մ.
   ա) մոտ 2000 բ) մոտ 3000 գ) մոտ 13000 դ) մոտ 15000
7. Ո՞ր պատմիչն է «Տիեզերական պատմություն» շարադրելու առաջին փորձը կատարել. 0,5 մ.
   ա) Մատթեոս Ուռհայեցի բ) Կիրակոս Գանձակեցի գ) Ստեփանոս Տարոնեցի դ) Վարդան Արևելցի
8. Ե՞րբ է Բուղայի զորքերին Արցախում հերոսաբար դիմագրավել Եսայի աբու Մուսե իշխանը. 0,5 մ.
   ա) 853 թ. բ) 851 թ. գ) 855 թ. դ) 869 թ.
9. Ե՞րբ է Արցախը հռչակվել Հայաստանի (առաջին հանրապետության) անբաժանելի մաս (նշե՛ք թիվը, ամիսը և օրը): 0,5 մ.
10. Մայիսյան հերոսամարտերի ժամանակ ո՞ր զորաջոկատի հրամանատարն էր Դանիել Բեկ-Փիրումյանը: 0,5 մ.
11. Ո՞վ է հայկական նոր ձայնագրության (հայկական նոտաներ) ստեղծողը: 0,5 մ.
12. Որքա՞ն էր թուրքերի կորուստը 1724 թ. Երևանի գրավման համար մղված մարտերում: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա) «Պեպո» հնչյունային կինոնկարի թողարկումը
    բ) Երևանի կոնսերվատորիայի հիմնումը
    գ) Առաջին հնգամյակի սկիզբը
    դ) Յա. Զարոբյանի պաշտոնավարման ավարտը
    ե) Էլեկտրոնային արագացուցչի գործարկումը Հայաստանում
    զ) Մեծ հայրենադարձության ավարտը
    է) Թ. Ալթունյանի ղեկավարած ժողովրդական երգի-պարի համույթի ստեղծումը
    ը) Համատարած կոլեկտիվացման ավարտը Հայաստանում
    թ) ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնադրումը

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
    1. Վենետիկ 2. Բեյրութ 3. Կալկաթա 4. Մոսկվա 5. Թիֆլիս 6. Աստրախան
    ա. Հայկազյան համալսարան բ. Լազարյան ճեմարան գ. Աղաբաբյան դպրոց
    դ. Ներսիսյան դպրոց ե. Մարդասիրաց ճեմարան զ. Մուրատ-Ռափայելյան վարժարան

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
    ա) Հայկական լեռնաշխարհի վաղ պետական առաջին կազմավորման՝ Արատտայի մասին գրավոր հիշատակությունները պահպանվել են խեթական աղբյուրներում և վերաբերում են Ք.ա. XVIII-XVII դդ.:
    բ) Հայաստանի տարածքում նեոլիթյան նշանավոր հուշարձաններ են Արագածի լանջին գտնվող Արտին լեռան, Արզնիի և Երևանի, ինչպես նաև Արցախի Ազոխի քարայրների հնավայրերը:
    գ) Էրեբունի ամրոցը հիմնադրելուց վեց տարի առաջ՝ Ք.ա. 788 թ., հինավուրց Արմավիր մայրաքաղաքի հարևանությամբ Արգիշտի I-ը կառուցել էր մի քաղաք, որն իր անունով կոչել էր Արգիշտիխինիլի:
    դ) Արտաշատի պայմանագրով Տիգրան Մեծը, հօգուտ Հռոմի, հրաժարվել է իր նվաճումներից, իսկ Մեծ Հայքի թագավորությունը ճանաչվել է «Հռոմեական ժողովրդի բարեկամ և դաշնակից»:
    ե) Առաջին միասնական հայկական պետությունը, որին հաջողվել է մեկ պետության մեջ միավորել ամբողջ Հայկական լեռնաշխարհը, Հայասա երկիրն էր:

զ) Հայոց Արտաշես արքայի որդի Վրույրը ժամանակի կրթված գործիչներից էր, որին Մովսես Խորենացին անվանել է «այր իմաստուն և բանաստեղծ»:
է) Վաղարշ Ի-ը պարսպապատել, բարեկարգել և Հայաստանի նոր մայրաքաղաքն է դարձրել Արաքս ու Հրազդան գետերի ջրկիցում գտնվող Վաղարշապատ քաղաքը:
ը) Ք.ա. 69 թ. սեպտեմբերին Լուկուլլոսի գլխավորած հռոմեական լեգեոնները ջախջախիչ պարտություն են կրել Արածանիի ճակատամարտում:
թ) Երվանդ Սակավակյացի օրոք Հայաստանը տարածաշրջանի ազդեցիկ պետություններից էր և կարող էր ռազմադաշտ հանել 40 հազար հետևակ և 8 հազար հեծյալ մարտիկներից բաղկացած բանակ:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)
ա) Օսմանյան կայսրության մեջ ռազմավարչական ամենախոշոր միավորը էյալեթն էր, որի գլուխ կանգնած էր սարդարը:
բ) Հայկական կորպուսը զինվորական միավորում էր, որ ստեղծվել էր 1917 թ. նոյեմբերին Կովկասյան ճակատում. հրամանատար էր նշանակվել գեներալ-լեյտենանտ Թ. Նազարբեկյանը, հատուկ կոմիսար՝ Դ. Կանայանը (Դրո):
գ) Նորանկախ Հայաստանի առաջին հանրապետության նորանշանակ օրենսդիր մարմինը Հայաստանի Գերագույն խորհուրդն էր, որն ուներ 80 պատգամավոր:
դ) ՀՀ նոր կառավարությունը կազմվել է ՀՅԴ ղեկավար մարմնի՝ բյուրոյի անդամներից, ուստի կոչվել է բյուրոկառավարություն, որի վարչապետ է դարձել Ս. Վրացյանը:
ե) Պարսկական տիրապետության շրջանում առանձին վարչական միավոր էր քաղաքը, որի գլխավոր պաշտոնյան՝ կառավարիչը, կոչվում էր քալանթար (քաղաքապետ):
զ) Նէպով նախատեսված տնտեսական բարեփոխումների առանցքը պարենմասնատրումն էր, որը վճարվում էր գյուղմթերքով կամ դրամով:
է) Երևանի խանությունը բաժանված էր 15 շրջանների՝ սանջակների, որոնց կառավարիչներին՝ սանջակբեյերին, նշանակում էր պարսից շահը:
ը) 1917 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Թուրքահայաստանի մասին» հրովարտակով (դեկրետ) Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը ճանաչում էր Արևմտյան Հայաստանում հայերի ինքնորոշման ու անկախ պետություն ստեղծելու իրավունքը:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա) 1918 թ. մարտի 3-ին կնքված Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրով Ռուսաստանը պարտավորվում էր Անդրկովկասից հանել իր զորքերը և զորացրել հայկական զորամասերը:
բ) 1918 թ. փետրվարին 10-ին Անդրկովկասի մենշևիկ, մուսավաթական ու դաշնակցական և այլ կուսակցությունների ներկայացուցիչ պատգամավորներից ձևավորվեց երկրամասի օրենսդիր բարձրագույն մարմինը՝ Անդրկովկասյան Սեյմը:
գ) 1918 թ. ապրիլին Ալեքսանդրապոլում Հայոց ազգային խորհրդի նախաձեռնությամբ կայացել է հայ քաղաքական կուսակցությունների և անկուսակցական գործիչների խորհրդակցություն, որը հայտարարել է Ռուսաստանից Անդրկովկասի անջատման ու անկախության հռչակման մասին:
դ) Հայ մեծահարուստ Մկրտիչ Սանասարյանի հովանավորությամբ 1881 թ. Նոր Նախիջևանում հիմնվել է նշանավոր Սանասարյան վարժարանը:
ե) 1860-ական թթ. բացվել են Շուշիի և Երևանի իգական դպրոցները:
զ) Հայ պարբերական մամուլի ուշագրավ օրգաններ են Ա. Չոպանյանի խմբագրությամբ Փարիզում հրատարակված «Անահիտ» և Գ. Լևոնյանի խմբագրությամբ Թիֆլիսում հրատարակված «Գեղարվեստ» հանդեսները:
է) XIX դարի վերջին տասնամյակներին սկզբնավորվել է հայ կուսակցական մամուլը՝ Հնչակյան կուսակցության օրգան «Հնչակ», Հայ հեղափոխական դաշնակցության պաշտոնական օրգան «Դրոշակ» և այլ պարբերականներով:
ը) 1868 թ. Կ.Պոլսում Հակոբ Վարդովյանի հիմնած թատերախմբի դերասանները բեմադրում էին հայերեն ու թուրքերեն ներկայացումներ:
թ) ՀՀ կառավարությունը 1920 թ. հունվարի 16-ին որոշում է ընդունել պետական համալսարան հիմնելու մասին:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)

Կիլիկյան Հայաստանի մեծ իշխան Թորոս I-ը 1098 թ. բյուզանդացիներից գրավել է Լեռնային Կիլիկիայի նշանավոր Վահկա բերդը և այն դարձրել Կիլիկյան Հայաստանի նոր իշխանանիստ կենտրոնը:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

«Եվ այսպես անտառ տնկեցին գետի ընթացքով դեպի ներքև, մինչև Տիկնունի ապարանքը: Նա այս անտառը կոչեց Տաճար մայրի: Մի ուրիշ անտառ էլ տնկեցին նրանից դեպի հարավ, եղեգնուտի եզերքով, և ամբողջ դաշտը լցրին կաղնի տնկով. սրա անունն էլ դրին Խոսրովակերտ: Նույն տեղում շինեցին նաև արքունական ապարանքներ»:

ա. Ե՞րբ է թագավորել վերոհիշյալ գործողությունների հրամաններն արձակած Հայոց արքան:

բ. Ինչո՞ւ էր նա իր նստավայրը տեղափոխել մայրաքաղաք Արտաշատից:

գ. Ի՞նչ նպատակով են օգտագործվել արքայի կողմից վերոհիշյալ արհեստական անտառները:

20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

XVII դարում գրված պատմագրական կարևոր աշխատություններից է Գրիգոր Դարանաղցու «...» (1) երկը, որտեղ ներկայացված են Օսմանյան կայսրության քաղաքական կացությունը և արևմտահայության կյանքը: XV դարի առաջին կեսի իրադարձությունները նկարագրված են մեկ այլ պատմիչի՝ ... ... (ո՞ւմ, 2) երկում: ... (3) դարի առաջին կեսի իրադարձությունները Հայաստանում առավել մանրամասն շարադրված են Առաքել Դավրիժեցու երկում:

21. Տրամաբանական խնդիր. 1 մ.

Եթե Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից գտնված իրը 6200 տարեկան է, կոնկրետ ո՞ր ժամանակաշրջանի ընթացքում է ստեղծվել (նշե՛ք կոնկրետ անվանումը):

22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Ո՞ր աշխարհին (նահանգն) է գունանշված:

բ. Ո՞ր խոշոր գետի և նրա վտակների ավազանում է այն գտնվում:

23. Ո՞ր գրքից են բերված ստորև պատկերում տրված էջերը. 0,5 մ.

24. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ (պատասխանե՛ք տրված հարցերին). 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Ո՞ր իրադարձության հետևանքով տեղի ունեցող գործընթացներն են ներկայացված 1909 թ. ռուսական այս ծաղրանկարում:
բ. Ո՞ր նահանգի հայ բնակչությունն էր նշված տարում իր մաշկի վրա զգացել նկարում պատկերվածի իրական արձագանքը (ազդեցությունը) հայերի նկատմամբ:

բ) Համաշխարհային պատմություն (10 միավոր)

1. Ո՞ւմ են վերագրվում ստորև մեջբերված խոսքերը. 0,5 մ.
Երբ նրան հարցրեցին, թե որո՞նք են լավագույն օրենքները, նա պատասխանեց. «Նրանք, որոնք դուք կարող եք ընդունել, իրագործել և ապրել բարեկեցիկ կյանքով»:
ա) Սոլոն բ) Պերիկլես գ) Պիսիստրատ դ) Կլիսթենես
2. Ո՞վ էր Իրանում Ղաջարական արքայատոհմի հիմնադիրը. 0,5 մ.
ա) Նադիր բ) Ֆաթհ Ալի գ) Աղա Մոհամմադ (Աղա Մահմեդ) դ) Հուսեյն
3. Ե՞րբ է Օտտոն I-ը պարտության մատնել հունգարներին. 0,5 մ.
ա) 944 թ. բ) 955 թ. գ) 973 թ. դ) 1001 թ.
4. Ո՞վ դարձավ Մեծ Բրիտանիայի վարչապետ 1979 թ. 0,5 մ.
ա) Ու. Չերչիլ բ) Թ. Բլեր գ) Ջ. Մեյջոր դ) Մ. Թեթչեր
5. Ի՞նչ էր կոչվում ԱՄՆ-ում մշակված ծրագիրը, որի համաձայն ԱՄՆ-ն պետք է ֆինանսական օգնություն ցուցաբերեր Երկրորդ աշխարհամարտից տուժած եվրոպական երկրների տնտեսությունները վերականգնելու և հասարակական ցնցումներից նրանց հետ պահելու համար: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)

1. 1945 թ. փետրվարի 4-11	ա. «Մյունխենյան գործարքի» կնքումը
2. 1945 թ. հուլիսի 17 – օգոստոսի 2	բ. Յալթայի (Ղրիմի) կոնֆերանսը
3. 1938 թ. սեպտեմբերի 30	գ. Պոտսդամի կոնֆերանսը
4. 1939 թ. օգոստոսի 23	դ. Խորհրդա-գերմանական չհարձակման պայմանագրի կնքումը

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա) 919 թ. առաջացած Գերմանական թագավորությունն ընդգրկում էր Հռենոս գետից Էլբա գետը և Հյուսիսային ծովից Ալպերի լեռներն ընկած տարածքները:
բ) Ռուսիայի մեծ իշխան Յարոսլավ Իմաստունն ամուսնացել էր բյուզանդական կայսր Լևոն VI Իմաստասերի քրոջ՝ Աննայի հետ:
գ) Հերետիկոսների գործերը հետաքննող հատուկ դատարանը՝ ինկվիզիցիան, ստեղծվել է 1215 թ. և անմիջականորեն ենթարկվում էր Հռոմի պապին:

դ) Մանուֆակտուրան ձեռքի աշխատանքի վրա հիմնված նոր տիպի ձեռնարկություն էր, որտեղ կար աշխատանքի բաժանում, և աշխատում էին վարձու բանվորներ:
ե) Եվրոպայում առաջացած ազգային պետությունների թագավորները մինչև XVI դարը շարունակում էին ենթարկվել Հռոմի պապին:
զ) 1444 թ. Վառնայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում թուրքերը ջախջախել են բուլղարացիներին և գրավել Բալկանյան թերակղզու հարավ-արևմուտքը:

1	2	3

8. Թվարկե՛ք՝ 2 մ. (4 X 0,5 մ.)
ա. Հին հռոմեական քաղաքակրթության ձևավորման ժամանակ Ապենինյան թերակղզում բնակվող 2 ժողովուրդներ կամ ցեղ(ախմբ)եր,
բ. Հին Հռոմի արքաներից 2-ին:

9. Աշխատանք քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)



ա. Միջնադարյան ո՞ր պետությունն է ընդհանուր գունանշված՝ իր ենթակա պետական կազմավորումներով (պարտադիր նշե՛ք պետության պաշտոնական անվանումը):
բ. Ո՞ր թվականին են պետության հիմնադիրները կորցրել դրա մայրաքաղաքի նկատմամբ վերահսկողությունը:

10. Միջնադարյան Եվրոպայի ո՞ր նշանավոր գործիչն է պատկերված որմնանկարում. 0,5 մ.

11. Աշխատանք պատմական պաստառի հետ. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա. Ո՞ր պետությունն է խորհրդանշում մեջտեղում պատկերված կինը:
բ. Նշե՛ք այդ պետության ղեկավարի անունը նշված ժամանակաշրջանում:
գ. Ի՞նչ ռազմաքաղաքական դաշինք է խորհրդանշում նկարը:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

09.03.2023 թ.